


Հայաստանի Պրոլետ-Տուրիզմի լեյ Եֆուկուսիոն
ԸՆԿԵՐՈՒՄԸ (ՊՏԵՐ.—ՕՍԻՅ)

Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Լ Ե Ն Ի Ն Ա Կ Ա Ն



ԳՐԱԳՐԱՆ ԶՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՆՆՐԱԿԱՆ 1 8 8 6

796
2-22

31 MAY 2013

25 OCT 2010

Հայաստանի Պրոլետ-Ժողովրդի յեկ Ծխակուրսիոն
ԸՆԿԵՐՈՒՔՅՈՒՆ (ՊՏԲԸ-ՕՍԻԹ)

796 Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
2-22, սյ

3976 40153
39164
Լ Ե Ն Ի Ն Ա Կ Ա Ն

ՀՍՄՀ-ՍՍՐ
ՀՍՄՀ-ՍՍՐ
ՀՍՄՀ-ՍՍՐ

Հ Ր Ո Տ Ե Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն
1 9 8 8

100 25

8992

Պատ. խմբագիր՝ Աշ. Ղազարյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանեյան
Արագրիչ՝ Ս. Շահրազյան

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏՆՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԸ

Լենինական քաղաքը Խորհրդային Հայաստանի
յերկրորդ արդյունաբերական կենտրոնն է :

Նա տեղափորված է հյուսիսային լայնություն
40° 47' և արևելյան յերկարություն 43° 50' վրա, Ա-
րաքսի վտակ Արփաշայ (Սխուրյան) գետից 2 կիլո-
մետր հեռավորությամբ :

Քաղաքը և 42 գյուղ ընդդրկող չրջանը ներկա-
յացնում են անտառազուրկ սարահարթ, Սև ծովի մա-
կերեսից 1532 մետր բարձրության վրա, չրջապատված
Ջաջուռի և Յասաղուլի (Կամխուտ) լեռներով և Ա-
րազածի լեռնային սիստեմով, վորի ձյունազարդ դա-
գաթները բարձրանում են քաղաքի արևելյան կող-
մում :

Արևմուտքից չրջանը սահմանակից է Թյուրքիա-
յին :

Լենինականը յենթակա յե հաճախակի յերկրա-
չարժերի և նրա պատմության մեջ, բացի 1926 թվի
մեծ յերկրաչարժից, հիշատակվում են ուժեղ յերկրա-
չարժերի այլ դեպքեր :

Քաղաքն ունի հետևյալ գեոլոգիական կառույց-
վածքը՝ հին քաղաքը, այն է, հյուսիսից Պոլիգոնը,
հարավից 10 փոոցը, արևմուտքից Պոլիգոնի յածու-

Գլավիխտ 232, հրատ. 3391, պատվեր 905, տիրած 1000

Պետհրատի տպարան, Յերևան, II Գնունի, № 4.

դին, արևելքից Գյումրի վտակը, կաղմված է ՅՎ մե-
տքը և ավելի հաստության տուֆ քարի շերտից, իսկ
տուֆի տակ ընկած է 3 մետր հաստության կավի շեր-
տը: Քաղաքի արևելքը և հյուսիս-արևելքը կաղմված
են հորիզոնական շերտով վերից վար իրար հաջորդող
հետևյալ շերտերից— սևահող (30-35 սանտիմետր),
պինդ կավ (1 մետր 20 սանտ.), փափուկ կավ (4-5
մետր), ավազուտներ և ավազ (4-5 մետր) և չափա-
զանց պինդ կավ (30-35 սանտիմետր):

Քարակ ալաղի շերտով անցնում են ստորյերկրյա
ջրերը, վորոնք քաղաքի արևելյան մասում գոյացնում
են բազմաթիվ ջրհորներ:

11, 13 և 15 փողոցների ներքևում է 6-7 մետր
հաստությամբ պինդ կավի լայն շերտը, իսկ 16, 19 և
20 փողոցներում կավի ավելի քարակ շերտ (2-3 մ.),
վորոնցից ավելի խորը գտնվում է ավաղաշերտը:

Թե քաղաքում և թե շրջակայքում շինարարական
տուֆը և ավաղը դուրս են գալիս բազմաթիվ կետե-
րում յերկրի մակերեսը:

Լենինականի արևմտյան մասում, Ձերքեղի ձո-
րում, Խաչքարում, վարդ պարտեզում գտնվում են
քաղաքի քարհանքները, վորոնք նրա գոյության ըն-
թացքում քար են մատակարարում շինարարության
համար և ունեն սև տուֆի անսպառ պաշար:

Քաղաքի զանազան մասերում և շրջակայքում կա
մեծ քանակությամբ շինարարական ավաղ: Հարուստ
ավազահանքեր կենտրոնացած են արևելքում, յեր-
կաթուղազդի մոտ, վորտեղ հայտնաբերված են մա-
մոնտի վոսկրներ:

Խաչքարի ձորում և դեպի Որթաքիլիսա, Մ. և Փ.
Քեթի գյուղերը տանող տարածության վրա, զանա-
զան կետերում հայտնաբերված է գորշ քարածուխ և
այրվող թերթաքար, վորոնք դեռ չեն ուսումնասիր-
ված ու չեն շահագործվում:

Խաչքարի ձորում, մոտ 10 հեկտար տարածու-
թյան վրա ընկած են տորֆի հանքերը, վորոնք 1933
թվից սկսած շահագործվում են տեղական արդյու-
նաբերության գծով:

Քաղաքից դեպի հարավ, կազաչի Պոստի շրջա-
նում հայտնաբերված է տրասսը: վարդ պարտեզում,
յերկաթուղային կայարանից 5 կմ. տարածության
վրա գտնվում է ինֆուզորի հողի անսպառ պաշար,
իսկ քաղաքից դեպի արևելք, յերկաթզդի մոտ, «Լու-
րի Ղորա» վայրում շահագործվում են բազալտի հա-
րուստ (հանքերը: Լենինականի շրջակա գյուղերում
կան բազմաթիվ ոգտակար հանածոներ՝ վարդազույն
տուֆ— Արթիկում, կրաքար— Ջաջուռում, մումիա
և ոխրա Մ. և Փ. Մուսայելյան գյուղերում, տրա-
խտ— Փ. Մուսայելյան, Ղալթաղչիում, հրաբխա-
յին մոխիր Բաջուղիում, Մուլլա Մուսայում, գորշ քա-
րածուխ Ջաջուռի սարերում և այլն:

Անդրկովկասի բոլոր բարձրավանդակային շրջան-
ների մեջ Լենինականն առանձնապես աչքի չե ընկ-
նում իր մայրցամաքային կլիմայով: Ձերմության բա-
ցարձակ տարբերությունը հասնում է 70, բացարձակ
մինիմումն իջնում է 31,7:

Քաղամայա տվյալներով միջին տարեկան ջերմու-
թյունը հավասար է +6,6°, փակ մթնոլորտային տե-
ղումների չափը 409 մլմ.:

Քամիների գլխավոր ուղղութիւնը հյուսիսից և հյուսիս արևելքից եւ ուժեղ քամիներ սովորաբար լինում են կեսօրից հետո:

Քաղաքի հյուսիսային (Տեքստիլ) և արևելյան (յերկաթուղային կայարան) մասերը տեղավորված են լայն հարթ տարածութեան վրա, իսկ կենտրոնում և արևմուտքում 15 և 29 փողոցներով, հյուսիսից դեպի հարավ անցնում են յերկու բլրաշարք, վորոնք իջնում են դեպի քաղաքի միջով հոսող Մուրղար, Գյումրի և Չերքեզի ձոր գետակները: Քաղաքից դուրս գալով, այդ գետակները թափվում են Արփաչայ գետը: Քաղաքի հատակագիծն ունի շախմատային տախտակի ձևով:

Նրա բոլոր փողոցներն անցնում են հյուսիսից հարավ, կամ արևմուտքից արևելք: Փողոցները համարակալված են և հատուկ անուններ չունեն, բացի «ընկ. Կիրովի անվան», «Ինտերնացիոնալ» և «Թիֆլիսի խճուղի» փողոցներից:

Հյուսիսից հարավ հերթով նշանակված են զույգ համարները, իսկ արևմուտքից արևելք կենտ համարները:

Կան մեծ քանակութեամբ նրբանցքներ ու փակուղիներ, վորոնք անցնում են թաղերի միջով և բոլորն էլ համարակալված են:

Բնակչութեան թիվը 70,000 մարդ է և կազմված է գլխավորապէս հայերից, կան փոքր քանակութեամբ ուսաներ և ուկրայնացիներ:

ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՅեՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հնագույն ժամանակներից այստեղ գտնվում էր կումայրի բնակավայրը, վորի մասին իր «Պատմութեան» մեջ հիշատակում է VIII դարի պատմաբան Գևորգ պատմիչը: Նա հիշատակում է, վոր 771 թվին Արտավազդ Մամիկոնեյանը Շիրակ գավառի կումայրի գյուղում հարձակվեց արաբ հարկահավաքների վրա, կոտորեց նրանց, իսկ նրանց ամբողջ ունեցվածքն ու հեռացավ դեպի Վրաստան:

Հարկահավաքների «հրամանատարի» կումայրիում գտնվելը ցույց է տալիս, վոր նա այն ժամանակ էլ յն դէլ է մեծ գյուղ և վորոչ չըջանի կենտրոն:

Սակայն Լենինականն իր չըջատուով ունի բազմաթիվ նյութական կուլտուրայի հուշարձաններ, վորոնք ցույց են տալիս, վոր այստեղերը յեղել են բնակված նախքան մեր դարաշրջանն ու նույնիսկ նեոլիտայան քարե դարի չըջանում: Մեծ քանակութեամբ «խաչքարեր» այստեղ էլ ընկած են Խաչքարի ձորում. քաղաքի տարբեր մասերում հայտնաբերված են բազմաթիվ գերեզմաններ, վորոնք պատկանում են նախաքրիստոնէական չըջաններին, գերեզմաններից հանած անոթները, գործիքները և բրոնզյա զենքերը տեղավորված են Լենինականի գավառագիտական ընկերութեան թանգարանում, մասամբ էլ տեղափոխված են Յերեվան:

Քաղաքի արևելյան մասում, յերկաթգծի ավագակույտերում գտնվեցին մամոնտի բազմաթիվ վոսկրներ, վորոնք մասամբ ուղարկվեցին Յերեվան, մա-

սամբ ել հանձնվեցին Լենինականի թանգարանին:

Հետագայում Կոմայրին (Գյումրին) դարերի ընթացքում ծառայել է կովածաղիկ թյուրքիայի և Պարսկաստանի միջև: Առաջին անգամ ուսնները գրավեցին թուրքերից 1804 թվին:

Վերջնականապես նա միացվեց Ռուսաստանին թուրքմանչայի 1828 թվի ուս—պարսկական պայմանագրով:

1837 թվին, հին ամրոցի փլատակների վրա, կառուցվեց բերդը, վորը քաղաքի վերածված Գյումրու հետ միասին անվանվեց Ալեքսանդրապոլ:

Բերդը իր «Կարմիր դուլա» և «Սև դուլա» աշտարակներով գոյություն ունի և այժմ:

Մինչև 1877 թվի ուս—թուրքական պատերազմը Ալեքսանդրապոլն ուներ խոչոր ուղղակի նշանակություն իբրև սահմանապահ բերդաքաղաք և ուղերաջիտն բազա թուրքական սահմանի վրա:

Քաղաքի բնակչությունը կազմվեց թյուրքիայից 1830, 1855, 1878, 1895 և 1917 թվերին յեկած դադարականությունից: Բնիկների մեջ մինչև այժմ ել տարածված են Երզրումի և Կարսի գավառաբառները:

1830 թ. գաղթականների մեջ կային նաև Պարսկաստանից յեկողներ:


1918 թվի մայիսի 15-ին թուրքերը գրավեցին քաղաքը, վորպիսին դատարկեցին նույն տարվա դեկտեմբերի 4-ին:

Յերկրորդ անգամ թուրքերը գրավեցին քաղաքը թուրք—դաշնակցական պատերազմի ընթացքում 1920 թվի նոյեմբերի 7-ին և դատարկեցին միայն 1921 թվի տարիլի 23-ին: Մինչ այդ, 1920 թվի մայիսի 9-ին,

յերկաթուղային բանվորությունը քաղաքի աշխատավորություն, կայազորի ու մոտակա գյուղերի աշխատավոր գյուղացիների մասնակցությամբ, ապրտամբվեց դաշնակ—մաուզերիստական բռնակալության դեմ և հայտարարելով Հայաստանը խորհրդային, կազմակերպեց հեղափոխական կոմիտե ընկ. ընկ. Մուսայելյանի, Ղարիբջանյանի և Ավիսի գլխավորությամբ:

Բայց խորհրդային իշխանությունը Լենինականում յերկար չապրեց և արդեն մայիսի 14-ին դաշնակցական—խմբապետական բանդաները վերագրավեցին քաղաքն ու արյան մեջ յեղեցին ապստամբությունը:

Դատական կոմեդիայից հետո, Լենինականում գնդակահարվեցին ընկ. ընկ. Գ. Սևոյանը, բժ. Փան—



Մայիսյան հերոսների հուշարձանը

յանը և Պրիբիլսկին, վորոնց մարմիններն ամփոփված են կենտրոնական աջու բլրակում, ուր դրված է Մոխրսյան հերոսների հուշարձանը:

Մի հուշարձան էլ, նվիրված Մոխրսյան ապստամբութեանը, կանգնեցված է կայսրանում ընկ. Գ. Սևփոյանի անվան ակումբի հրապարակի վրա:

Մահվան դատապարտված ընկ. ընկ. Մուսայելյանը և Ղարիբջանյանը հետադաշում սպանվեցին դաշնակների ձեռքով Յերեվանում:

1924 թվին, կենտգործկոմի կողմից հաստատված քաղխորհրդի վորոշումով, քաղաքը վերանվանվեց Լենինական:

Նախ քան 1914—1918 թվերի պատերազմը, Լենինականի տնտեսական կյանքն ու զարգացումը պայմանավորում էր նրա մեջ կենտրոնացած խոշոր կայազորը, վորը հասնում էր 15000-ի, իսկ ամառային ճամբարի ամիսներին 40000-ի:

Այդ, ինչպես նաև Շիրակի դաշտի տնտեսական կենտրոնը լինելու պատճառով, լայն տարածված արհեստների կողքին զարգացած էր և մանրածախս առևտուրը, վորն սպասարկում էր զլխավորապես զորամասերին և դրել էր իր մանր քաղքենիական կնիքը քաղաքի վա:

Մանր առևտրի ցանցն ընդգրկում էր մոտ 1000 կրպակ, առաջին և յերկրորդ կարգի առևտրական ձեռնարկների թիվն էր 124, վորոնցից 27-ը զբաղված էին խմիչքների վաճառքով:

Արդյունաբերական կյանքը կենտրոնացած էր փոքր արհեստանոցներում:

Ցարական տիրապետութեան ամբողջ ժամանակա-

շրջանում քաղաքը զարգանում էր դանդաղ քայլերով. բավական է ասել, վոր տարիների ընթացքում վոքթրաթիվ զործատների քանակը մնում էր անփոփոխ, ինչպես և նրանց արտադրանքը: Վոչ միայն վոչինչ չէր արվում արդյունաբերութեան զարգացման համար, այլ ցարական կառավարութեանը, ինչպես և մնացած ծայրամասերում, խեղդում էր ամեն մի նախաձեռնութեան ու տեղի բնական հարստութեանները և գյուղատնտեսական հումքը մնում էր ին առանց չահագործման:

Առաջ չէր գնում և կուլտուրական կյանքը:

Ամբողջ քաղաքում կար միայն մի որիորդաց դիմնադիա, մեկ առևտրական դպրոց, մի յերկդասյան, 4 միդասյա և 5 ծխական դպրոցներ:

Յերեխաների մեծ մասը մնում էր դպրոցից դուրս, անգրագետների տոկոսը հավասար էր 77,8-ի:

Մինչև 1909 թիվը քաղաքի հիմանդանոցն ուներ 20 մահճակալ, հետադաշում քաղաքային «Լիննավարութեանը» կրճատեց «ավելորդ» մահճակալները և թողեց միայն 16 մահճակալ մի բժշկով:

Քաղաքի բյուջեյի միայն 5,6 տոկոսն էր ծախսվում բարեկարգման վրա. վարչական ապարատի, վոստիկանութեան և զորամասերի բնակարանային սպասարկման վրա քաղաքը ծախսում էր իր տարեկան բյուջեյի 35,2 տոկոսը:

Պատերազմի առաջին տարիները վորոչ կենդանութեան մտցրին քաղաքի առևտրական կյանքի մեջ, բայց միաժամանակ քայքայեցին նրա կուլտուրական ու տնտեսական կյանքը:

Համարյա բոլոր դպրոցները փակվեցին ու նրանց

չենքերը տրամադրվեցին գինվորական ժամանակավոր հիվանդանոցներին ու իբրև հանրակացարաններ թյուրքիայից և Կարսի նահանգից յեկած բազմահարյուր դադթականությանը :

Առևտրական միջնակարգ դպրոցը բոլորովին փակվեց ու նրա շենքում տեղավորվեց «Քաղաքների միության» գինվորական հիվանդանոցը :

Քաղցն ու տարափոխիկ հիվանդութիւնները, առաջին հերթին բժավոր տիֆը, յայն տարածվեցին քաղաքում ու շրջանում :


1918 թվի խիստ ձմեռը և վառելափայտի պակասը սրկեցին քաղաքը համարյա բոլոր ծառերից, վոր կտորվեցին բնակիչների ու զաղթականության ձեռքով : Վոչնչացվեցին բոլոր պետական հիմնարկների ու շատ մասնավոր տների փայտյա մասերը :

Դաշնակցության բռնապետության տարիներին այդ բոլորին ավելացավ բազմաթիվ խմբապետների, մարտկերիստների ու քրեական տարրերի անպատիժ գործունեությունը :

Այդ պայմաններն և դաշնակցության կործանիչ քաղաքականությունը բոլորովին քայքայեցին քաղաքի և շրջանի տնտեսական և կուլտուրական կյանքը :

Ամեն որ քաղաքում ու շրջանում տեղի էին ունենում սպանություններ, թալան, կանանց առևանգում, գողություններ, վորոնք մեծ մասամբ մնում էին անպատիժ :

Հրացանաձգությունը չէր դադարում գիշեր ու ցերեկ : Այնպես վոր, յերբ 1921 թվի ապրիլի 23-ին Կարմիր Բանակը մտավ Լենինական և կազմակերպվեց շրջանային հեղափոխական կոմիտեն, քաղաքը



Մեծափ Գրաստիպանց գտիցա վիճակի փոշի

իրենից ներկայացնում էր կիսավեր տները մի մեծ կույտ, վորոնց մեջ ապրում էր մի քանի հազար կիսաքաղց, բարոյալքված բնակչութիւն։

Այսպիսի պայմաններում էր, վոր Լենինականի պրոլետարիատը կոմկուսակցութեան ղեկավարութեամբ և Հայաստանի, Անդրկովկասի և ամբողջ ԽՍՀՄ-ի պրոլետարիատի աջակցութեամբ սկսեց իր ըստեղծագործական շինարար աշխատանքը—սոցիալիստական Լենինականի կառուցումը։

1926 թվի հոկտեմբերի 22-ի ուժեղ յերկրաշարժը մի նոր ծանր հարված հասցրեց արդեն իսկ զգալիորեն վերականգնված Լենինականի տնտեսութեանը, բայց Լենինականի պրոլետարիատը Լենին-Ստալինի կուսակցութեան ղեկավարութեամբ, կարողացավ մորեկիցացի յենթարկել իր բոլոր ստեղծագործական ուժերը և բառացիորեն ամբողջ ԽՍՀՄ-ի պրոլետարիատի յայն աջակցութեամբ, կառուցեց Հին Ալեքսանդրապոլ—Գյումրու փրատակների վրա սոցիալիստական Լենինականը։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆարական շրջանում կային 6 փոքր գործարաններ (ոճառի, գարեջրի, կրի, աղյուսի), վորոնք ունեյին 84 բանվոր և 80,000 ուրբ. արտադրանք։ Ներկայիս քաղաքի արդյունաբերութիւնն (առանց յերկաթուղու) բնդրիւմ է 15 գործարան 4441 արտադրական բանվորով։ 1934 թվի տարեկան արտադրանքն յեղել է 25,720 հազար ուրբ. անփոփոխ գներով։

1. Նրա գլխավոր արդյունաբերական ձեռնարկու-

թիւնը, Տեքստիլ կոմբինատը, տեղավորված է քաղաքի հյուսիսային մասում։

Ներկայումս գործում են մանվածքագործվածքային և տրիկոտաժ գուլպայի գործարանները, վորտեղ զբաղված է 41196 իլիկ, 1127 դաղզահ և 315 տրիկոտաժ գուլպայի մեքենաներ ու աշխատում է 3236 արտադրական բանվոր։ Գործարանը Լենինականի կայարանի հետ միացած է առանձին յերկաթգծով։

1934 թվին մանվածքագործվածքային գործարանը տվեց անփոփոխ գներով 9,762 հազար ու. արտադրանք, իսկ տրիկոտաժ—գուլպայի գործարանը 5020,2 հազար ուրբ.։

Տեքստիլ գործարաններն արտադրում են մանվածք, բյալ, գուլպա, տրիկոտաժ և լայն սպանոտն մի շարք այլ ապրանքներ։

1934 թվին նույն հողամասի վրա, սկսվեց նոր մանվածքագործվածքային գործարանի կառուցումը, վորով իլիկների քանակը հասցվում է 100,000-ի և դաղզահներինը 2436-ի։ Շինարարութիւնը տարվում է ուժեղ տեմպերով 1935 թվին ավարտվելու պայմանով։

Տեքստիլին կից կառուցված է բանվորական աւիան։ Այնտեղ կենտրոնացած են մանկապարտեզ, մանկական ոջախ, կոոպերատիւներ, բանֆակ, տեխնիկում, Փարգործուս, հոյակապ թատրոն-ախումբ, բաղնիք, բլաքատուն, հրչեջ դեպո և այլն։ Սկսված է միջնակարգ վարոցի, միասնական դիսպանսերի և նոր բնակելի շէնքերի կառուցումը։

1935 թվին քաղաքային խորհուրդը հաստատեց

Տեքստիլ քաղաքամասի նոր հատակադիժը, ըստ վորի
և կատարվում է նրա նոր շինարարությունը:


Բանավանը ծառադարդված ու կանաչազարդված
է, կա ավտոբուսային հաղորդակցություն յերկա-
թուղային կայարանի ու քաղաքի հետ, սալահատակ-
ված են ճանապարհները:

Բացի Լենգեսից ստացվող ելեկտրոներգիայից
ինքը Տեքստիլն ունի պահեստի ջերմակայան 500 կվ-
կարողությամբ: Այսօր Տեքստիլի բանավանն իր ար-
դյունաբերական ու բնակարանային շենքերով և բա-
րեկարգումով քաղաքի ամենահետաքրքիր ու գեղե-
ցիկ մասն է կազմում: Տեքստիլի բանվորությանն է
տրամադրված նաև Լենինի այգին շրջապատող Թա-
ղամասը, վորի բոլոր աները կառուցվեցին 1927-1929
թվերին:

2. 1934 թվի հուլիսի 29-ից, քաղաքի հարավա-
յին մասում սկսեց գործել նորակառույց Մսի կոմբի-
նատի ստուգարանը, իսկ 1935 թվից գործարկվում են
նրա բոլոր ցեխերը, վորոնք պետք է լրիվ վերամշա-
կեն մորթող անասունների բոլոր մասերը:

Կոմբինատը ներկայացնում է մեքենայացած,
տեխնիքապես առաջավոր մի հսկա ձեռնարկություն,
վորի մի հերթի նորմալ տարողությունը լինելու յե
160 գլուխ խոշոր և 550 գլուխ մանր անասուն: Նա
ունի հետեյալ ցեխերը՝ սպանդի, ճարպի, աղիքների,
յերչիկի, արյան, մորթա-մազային, նախսպանդային,
ուտիլիզացիայի:


Քաղաքի հետ կոմբինատը կապված է 1934 թվին
կառուցված նոր խճուղիով, իսկ յերկաթուղային կա-
յարանի հետ հատուկ գծով: Կոմբինատին կից կա-



1915
3976
1006
3976

Մսի կոմբինատի ստուգարանը

Լենինական 2



ուսցվում է բանվորական ավան, անցկացված է ջր-
մուղ գետի կայարանի ջրամբարները, ավարտվում է
կապսի նոր ջրմուղը:

3. Քաղաքի արևմտյան մասում, «Չերքեզի
ձոր» գետակի ափին կառուցված է Արարատ- արե-
տի սպիրտի գործարանը, վորն աշխատում է շաքարի
ձակնդեղի տեղական հումքի բազայի վրա:

4. 1932 թվից, 23-28 փողոցների անկյունում նո-
րակառույց շենքում աշխատում է կարի գործարանը,
վորն ունի 147 մեքենա, 368 բանվոր և 3 միլ. ուս-
տարեկան արտադրանք:

5. Մեխանիկական գործարան - կարսի խճուղու
աջ կողմը «Չերքեզի ձոր»-ի ափին, մեկ միլիոն ուս-
տարեկան արտադրանքով, ունի 110 բանվոր: Գոր-
ծարանը պատրաստում է սղոցարաններ (лесопили-
ные станки), սեղմիչներ, ջրունգներ, մահճա-
կալներ, թուճի վառարաններ: Սպասարկում է Լե-
նինականի արդյունաբերական և գյուղատնտեսական
կարիքները, կատարում է նորոգման աշխատանքներ,
պատրաստում է լայն սպառման մետաղի առարկա-
ներ:

Գործարանն ունի հարվածքի, խարտի, փակա-
նադորձական, դարբնոցի, նիկելի և մոդելի ցեխեր:

1934 թվից նա սկսեց արտադրել պեմզա-բլոկ պա-
րաստող դաղգահներ, վորոնք մինչև վայժմ ստաց-
վում էյին արտասահմանից:

6. Փայտամշակման գործարան- յերկաթուղային
ապրանքային կայարանի մոտ. ունի 90 բանվոր և տա-
րեկան 600.000 ո. արտադրանք, պատրաստում է
ձիասայլեր, քամհարներ, գրասեղաններ, պահարան-

ներ, աշակերտական սեղան - նստարաններ, լայն
սպառման առարկաներ:

7. Տոմետ- կղմինդրի գործարան- կարսի խճու-
ղու ձախ կողմը, ունի 40 բանվոր և տարեկան 260.000
ո. արտադրանք: Պատրաստում է տոմետ, կղմինդր,
սանդուխի աստիճաններ, բետոնի և կավե խողովակ-
ներ, լվացարաններ, կավամաններ և լայն սպառման
առարկաներ:

Առանձին նշանակութուն է ստացել վերջին ջր-
ջանում մշակված կղմինդրի արտադրութունը, վոր
պատրաստվում է ցեմենտից ու տեղական շինանյու-
թերից և լայն կերպով ոգտագործվում է իբրև ծած-
կի նյութ:

8. Ոճառի գործարան - քաղաքի հարավային
ձայրամասում, պատրաստում է տարեկան 1500 տոնն
բարձրորակ ոճառ, վոր մասամբ արտահանվում է
Թյուրքիայի սահմանակից շրջանները:

9. Հրուչակեղենի գործարան, 25 փողոցի վրա,
պատրաստում է տարեկան 300 տոնն կարամեղ և 300
տոնն թխվածքներ:

10. Տպարան ընկ. Կիրովի անվան փողոցի վրա:
Ունի շարվածքի, թերթերի, տպագրական և կազմա-
րարական ցեխեր:

11. Գարեջրի գործարան - 15 փողոցի վրա, տա-
րեկան 10.000 հեկտոլիտր արտադրանքով, պատրաս-
տում է տեղական դարուց բարձրորակ դարեջուր,
վորն սպառվում է տեղական, Յերեվանի, Թիֆլիսի
և այլ քաղաքների շուկաներում: Ի նկատի ունենա-
լով տեղական դարու բեկորային վորակը գարեջուր
պատրաստելու համար նախագծվում է լայնացնել

դործարանի սուղի ըստինը, վորը տարեկան տալու յե 2.000 տոնն սուղը ամբողջ Անդրկովկասի դարե- ջրի արդյունաբերութեան կարիքը բավարարելու համար:

12. Լիմոնազի դործարան — տեղավորված դարեջրի դործարանի շենքում, տալիս է տարեկան 5000 հեկտոլիտր արտադրանք, վոր սպառվում է քա- ցառապետ Լենինականում:

13. Հանածոների միավոր — քաղաքի և Ղանլիջա գյուղի հողերի վրա, շահադործում է պեմզայի, տորֆի, հրաբխային ավազի ու մոխրի և դիատոմի- տի հանքերը, իսկ քարհանքերը (տուֆ, բաղալո) և ավաղահանքերը շահադործվում են տնայնագործական կոոպերացիայի գծով: Ըստ նախնական ուսումնասի- րությունների ոգտակար հանածոների պաշարը Լե- նինականի և նրա շրջակա գյուղերի հողերում հաս- նում է միլիոնավոր տոնների և տարեց տարի ավելի ու ավելի մեծ չափերով պեմզան և դիատոմիտը ար- տահանվում են Բաղու, Մոսկվա և Պորհրդային Միու- թյան այլ արդյունաբերական կենտրոնները:

14. Ընկ. Լենինի անվան հիդրոէկայանը — Լեն- դեսը 5280 կվ. կարողութեամբ կառուցված 1928 թվին Շիրակի ջրանցքի վրա, Կապս գյուղի մոտ, քաղաքից 12 կմ. հեռավորութեան վրա: Թե Լենդեսը և թե Շիրակի ջրանցքն ունեն չափազանց զեղեցիկ տեսարաններ: Հիդրոէկայանի ջրվեժը թափվում է 112 մետր բարձրութեանից:

Լենինականի բազմաթիվ աբսեստավորները ներ- կայումս միացած են տնայնագործական կոոպերա- ցիայի 7, Մանուկների Բարեկամների Ընկերության 3 և Հաշմկոոպի 7, ընդամենը 17 արտերներում, վորոնց 47

աբսեստավորներ ընդգրկված է արտելի 890 անգամ և 68 աշակերտ: Մեքենաների թիվն է 126: Գլխավոր ար- տերներն են Լենկար, Լենկոշ, Մեխանիվ, գորգագործ- ների և տեղական շինանյութերի:

Լենինականն ունի տեղական արդյունաբերութեան գորգացման լայն հնարավորություններ, տեղական հարուստ հանածոների և գյուղատնտեսական հումքի բազայի վրա:

Վերջին տարիներին կատարված փորձերը ցույց տվին, վոր շաքարի ճակնդեղի մի հեկտարի միջին բերքատվությունը Լենինականի հողերի վրա կազ- մում է 200 ցենտներ, իսկ շաքարունակությունը՝ 19,5 տոկոս, վոր առաջ բերեց յերկրորդ հնգամյակի ըն- թացքում Լենինականում շաքարի դործարան կառու- ցելու խնդիրը:

Ի նկատի ունենալով տեղական վուշի (կտավատի) սերմերի բարձր բերքատվությունը և վորակը, 1933 թվից ոճառի դործարանին կից կառուցվում է բուսա- կան ոլիֆի գործարանը:

Ջաջուռ կայարանում կառուցված է Լենքաղխոր- հրդեղի կրի մեքենայացրած գործարանը, վորն ար- տադրում է տարեկան 10.000 տոնն կիր: Կրաքարի հա- բուստ հանքերը գտնվում են գործարանից յերկու կի- լոմետրի վրա:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲՍՐԵԿԱՐԳՈՒՄ

1926 թվի յերկրաչաբժը քայքայեց Լենինականի բնակարանային ու կոմունալ տնտեսությունը:

Պորհրդային Միութեան և պրոլետարիատի ոժան- դակութեամբ տարված շինարարութեան հետևանքով

ներկայումս քաղաքի բնակարանային տարածությունը կազմում է 233·000 քառ. մետր :

Նորակառույց շենքերը կենտրոնացած են «ինտերնացիոնալ» փողոցի վրա, վորը միացնում է Տեքստիլը կայարանի հետ, Լենինյան այգու շրջապատում, կայարանի ու Տեքստիլի քաղաքամասերում, ընկ. Կիրովի անվան փողոցի յերկու կողմը, մտի կոմբինատում և քաղաքի կենտրոնում :

1927—28 թվերին շենքերը կառուցված են միջնագարյան փոճով. այդպես են «Տպագրիչ»-ի և Լենինյան հրատարակի շենքերը :


Դրանից հետո, մինչև 1932 թիվը կատարված կառուցումները մեծ մասամբ անճաշակ տուփիկներ են, ինչպես որինակ ընկ. Կիրովի անվան փողոցի մի շարք տներ :

Միայն Համկոմկուսի Կենտկոմի 1932 թվի հայտնի փորձումից հետո, նախագծված շենքերն ունեն պրոլետարական կուլտուրայի պահանջներին համապատասխան արտաքին ձևավորում :

Համեմատաբար զեղեցիկ ձևավորված ու կառուցված են Տեքստիլի բնակելի շենքերը :

Իրենց զեղեցիկ արտաքինով աչքի յեն բնկնում հյուրանոցը, Կինո-Հոկտեմբերը, Կարմիր բանակի տունը, Կոմունալ բանկը և քաղաքային խորհուրդը :

Քաղաքի տների մեծագույն մասը կառուցված է տեղական սև տուֆ քարից ու այդ պատճառով քաղաքը թողնում է մոայլ տպավորություն : Խորհրդայինացումից, մանավանդ յերկրաշարժից հետո կատարված շինարարություն մեջ միայն զգալի տեղ է



Պեղքված փողոցային տների քաղաքային տեսքը

արված Արթիկի վարդազույն տուֆին, տեղական կարմիր տուֆին և բազալտին:

Բացառապես բազալտից և կաուուցված հյուրանոցի շենքի Փասաղը:

Քաղաքային խորհրդի կոմունալ տնտեսությունն ընդգրկում է՝ յերկու բաղանիք (կաուուցվում է 3-րդ մեծ բաղանիքը), լվացքատուն, դյուզացու տուն, իջև-վան, սանիտարական, ասենիզացիոն և փոխադրական դումակ, ավտոբուսային հաղորդակցություն, հրշեջ խումբ, ելեկտրական ցանց, Փերմա-տնկարան, անասնաչուկա, չրամատակարարում, շուկաներ և այլն:

Ներկայումս քաղաքի բնակչությունն ստանում է խմելու ջուր աղբյուրներից, իսկ կայարանի չրջանում՝ ջրհորներից: Չանազան կետերում գրված է 50 աղբյուր, վորոնք տալիս են որական 360-000 դույլ ջուր:

Այդ աղբյուրները դաշնակցության որով մեծ մասամբ փակվեցին խնամքի բացակայության և հստակում չկատարելու պատճառով:

Ասանձին ջրմուղներ ունեն՝ Տեքստիլը (որական 120-000 դույլ ջուր), յերկաթուղային կայարանը (150-000 դույլ) և բերդը, վորն ստանում է բարձր վորակ ջուր (Յասաղուլի աղբյուրներից):

Աղբյուրների ջրի վորակը մեծ մասամբ բարձր չէ. թեև բոլոր ջրերը մաքուր են ու սառն, բայց նրանք պարունակում են աղերի խոշոր տոկոս. բարձր է և որդանական նյութերի տոկոսը:

1933 թվից սկսված է քաղաքի նոր ջրմուղի կաուուցումը: Նոր ջրմուղը տալու յե Աենինականին որական 9 միլիոն դույլ բարձրորակ մաքուր ջուր Ամասիայի չրջանի Աազանչի դյուղի աղբյուրներից վորոնք

գտնվում են քաղաքից 40 կմ. հեռավորության վրա: Ամբողջ ջրմուղը պատրաստ կլինի 1936 թվի կեսին:

Համաքաղաքային կոյուղի Աենինականը դեռևս չունի: Մի քանի տասնյակ հին տներ և բոլոր նորահասույց շենքերն ունեն մասնակի կոյուղիներ, ընդհանուր յերկարությունը 5 կմ., վորոնք միացված են Մուրզար և Գյումրի գետակների հետ: Այդ կոյուղիներն սպասարկում են ընդամենը 200 տնատիրություն:

Քաղաքի կաուուցումը թե՛ հնում և թե՛ խորհրդայնացման առաջին տարիներին կատարվել է առանց հաշվի առնելու նրա հետագա դարգացման հեռանկարները: Չանազան ախլի ու նպատակի չինություններ կաուուցվել են տարբեր քաղաքամասերում, առանց հաշվի առնելու տեղի պայմանները, քամիների ուղղությունը, տնտեսական դարգացման հեռանկարները և նույն իսկ փողոցների ուղղությունը:

Քաղաքային խորհուրդը հանձնարարեց ՀՍՍՀ կոմտնտօղկոմատին կից Գիպրոպորին՝ կազմել քաղաքի նոր հատակագիծը, վորի սխեման արդեն պատրաստ է:

Նոր հատակագիծումը լայնացնում ու կարգավորում է փողոցները, վերացնում է նրբանցքներն ու փակուղիները, առանձնացնում է արդյունաբերական սեկտորը, նախատեսել է սլարկեր, պարտեզներ, ծաուուղիներ, նշում է ապագա հիվանդանոցային, դըպրոցական ու վարչական շինարարության վայրերը:

Աենինականի փողոցների ու հրապարակների տարածությունը կազմում է 583·849 քաու. մ., վորից մինչև 1934 թվի վերջը սալահատակված էր 194·417

քառ. մ. ու մայթիված եր' 54.020 քառ. մ., դեռևս մնում է շտախանատակված 339.412 քառ. մ.:

Մալահատակների մեծ մասը խճաքարից է (ԾՅ-ԼՅԵՅՆԻՅԻ ԿԱՄԵՆԻ), աննշան քանակությամբ անցկացված է դրանիտի սալահատակ: Մայթերը տրախիտից են, մասամբ էլ ասֆալտից:

Մալահատակումն ու մայթումը հիմնականում կատարվեց միայն խորհրդայնացումից հետո, հնում սալահատակներ ու մայթեր ունեյին միայն քաղաքի կենտրոնական մի քանի փողոցներ, վորոնցից սալահատակված էր 4600 քառ. մ. և մայթված՝ 2.400 քառ. մ.: Այդ էլ խորհրդայնացման նախորդակին բոլորովին քայքայվել էր ու կարիք յեղավ բոլորովին վերակառուցել:

Լենինականի փոքրաթիվ պարտեզներից խորհրդայնացման սկզբին մնաց միայն քաղաքի կենտրոնական այգին:

Այդ այգին այժմ լայնացված է. նրան միացվեց գերեզմանատունը, կամ «բլրակը», վորը ծառապարզված ու կանաչապարզված է և ներկայացնում է իրանից աշխատավորութան գլխավոր գրոսավայրը:

Բացի այդ, փոքրեկ պարտեզներ կան այժմ Տեքստիլ գործարանի մոտ, Լենինյան հրապարակի վրա, յերկաթուղային կայարանի մոտ, քաղաքի հարավային մասում, բանջարանոցների շրջանում, Պոլիգոնում և այլն:

Պոչոր ծառատնկում կատարվել է Տեքստիլում, խորհրդային տնտեսութան հողամասում, քաղաքի շատ փողոցներում:

Նոր գրոսավայրեր կառուցվում են «Պատվո

րլուր» կոչված նախկին գերեզմանատանը և Չերքեզի ձորում, վորտեղ կազմակերպվում է կուլտուրայի և հանդստի պարկ:

Առանձնապես գեղեցիկ է Չերքեզի ձորը, ունի հետաքրքիր տեսարաններ, հնում ծածկված էր ծառերով, վոր վոչնչացվեցին 1918—1920 թվերին:

Վերջին տարիներին այստեղ տնկված են բազմաթիվ ծառեր:

Ելեկտրական ցանցն ունի 4665 բաժանորդ. 1934 թվին ցանցի զծով տների և փողոցների լուսավորութան համար տրամադրվեց 3.073.000 կլմ. ժամ. լուսավորվող փողոցների յերկարությունը 30 կիլոմետր է, ընդամենը դրված է ելեկտրական լուսավորութան 764 կետ, նույն թվում 7 լուսարձակ՝ կենտրոնական հրապարակում:

Այդ գրությունը չի կարելի համեմատել անգամ ցարական-դաշնակցական Ալեքսանդրովիչի հետ, յերբ քաղաքը գեղեցիկները լուսավորողը հիմնականում լուսինն էր և մի յերկու տասնյակ նավթով վառվող լապտերներ՝ կենտրոնական փողոցներում:

Քաղաքն ունի յերեք շուկաներ, վորոնք գտնվում են նրա հարավային մասում:

Ամենից բարեկարգ վիճակում գտնվում է կոլտրնտեսական շուկան, վորտեղ կառուցված է 126 առևտրական կետ:

Ավելի հարավ, քաղաքի ծայրում, ընկած է անասնաշուկան, իսկ նրանից վոչ հեռու՝ յերկրորդ առևտրական շուկան ու իջևանը:

Լենինականը տրամվայ չունի և հաղորդակցութան գլխավոր միջոցն ավտոբուսներն են, վորոնք

կանոնավորաբար յերթեկեղում են քաղաքի կենտրոնում գտնվող Մայիսյան հրապարակից մինչև Տեղբայրի դործարանները, կայարան և Մսի կոմբինատ: Ավտոբուսներն աշխատում են առավոտյան ժամի 7-ից մինչև գիշերվա ժամի 1-ը:

Քաղաքի արևմտյան մասում «Չերքեզի ձոր» գետակի ու Ծ-րդ փողոցի մեջ ընկած տարածության վրա գտնվում է քաղխորհրդի տնկարան-ծաղկանոցը, փորի տարածությունն է 3 հեկտար: Այստեղ մշակվում են ծառեր ու ծաղիկներ՝ քաղաքի ծառայարդման ու կանաչադարձման համար: 1925 թվից տնկարանը լայնանում է և նրա տարածությունը հասնում է 7 հեկտարի: Տնկարանն ունի խնձորի, բալի, տանձի, թթի և դեկորատիվ ծառեր, թփեր, ջերմոցներ: Վերջինների մեջ մշակվում են ծաղիկներ և մերձարևադարձային բույսեր:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ցարական շրջանի հատուկենա դպրոցների դիմաց 1933 թվից Լենինական քաղաքում և շրջանի բոլոր քյուղերում լրիվ իրադործված է ընդհանուր, ձրի և պարտադիր ուսումը — քաղաքում լուսբաժնի ցանցը ներկայումս ընդգրկում է յերեք լրիվ միջնակարգ, չորս վոչ լրիվ միջնակարգ և յերեք տարրական դըպրոցներ՝ 7212 աշակերտով: Յերկաթուղային շրջանն ունի մեկ լրիվ միջնակարգ և մեկ վոչ լրիվ միջնակարգ դպրոց՝ 1650 աշակերտով:

Այդպիսով պարտուսի ցանցն ընդգրկում է 8862 աշակերտ:

Բոլոր դպրոցներում կան արհեստանոցներ, Ֆիզիկական կարիներներ, քիմիական լաբորատորիաներ, աշխատանքի սենյակներ:

Նախադպրոցական ցանցում ընդգրկված է 1500 յերեխա, ամառային մանկահրապարակներում՝ 4000 յերեխա:

Ամեն տարի քաղաքի աշակերտությունն ուղարկվում է պիտներական ճամբար, վորը կազմակերպված է Ղրղըղոչ գյուղի մոտ, Արիաչայ գետի ափին, բնական գեղեցկություններով հարուստ սարահարթի վրա:

Չափահաս ընակչության 95 տոկոսը գրադեա է ցարական շրջանի 22,2 տոկոսի դիմաց:

Կադրերի պատրաստման գծով գոյություն ունեն հետևյալները. յերկաթուղային և տեքստիլ բանֆակներ, յերկաթուղային, տեքստիլ Փաբլործուսներ, մանկավարժական, դաշտավարական, յերկաթուղային, տեքստիլ, կաթնարդյունաբերական և յերաժըտական տեխնիկումներ, պրոֆյերաժչտական ու նկարչական դպրոցներ, կոմհամալսարան, խորհրդային-կուսակցական կոլտնտեսական դպրոցներ և այլն:

1934 թվից՝ դիչերային մանկավարժական ինստիտուտը, լեղվարանական, պատմաբանական և Ֆիզիկոմաթեմատիկական ֆակուլտետներով

Ընգամենը կադրեր պատրաստող դպրոցներում սովորում էլին՝ բարձրագույն դպրոցներում՝ 318 ուսանող, տեխնիկումներում՝ 892 սովորող, բանֆակներում՝ 728 սովորող, մնացած դպրոցներում՝ 846 ուսանող, ընգամենը՝ 2784 սովորող, առանց հալվելու հեռակա ուսուցումը և կարճատև դասընթացները:

Յեթե հաշիվներ բոլոր սովորողները (պարտուս, մանկապարտեզ, կադրային, կուրսեր, չափահասների դպրոցները և այլն), այդ ղեկավարում լենինականցիներին շորտից մեկը սովորում և ներկայումս

Յերկաթուղային ու տեքստիլ ուսումնական հիմնարկները տեղավորված են յերկաթուղու և Տեքստիլի հոգամասերում կառուցված հատուկ շենքերում: 1935 թվին Պոլիզոն քաղաքամասում ավարտվում ու գործարկման են հանձնվում կաթնարդյունաբերական և մանկապարտական տեխնիկումների նոր շենքերը, վորոնց կառուցումն սկսված և 1933 թվին:

ԿՈՒԼՏ. ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Քաղաքային կենտրոնական այգում կառուցված է Յերկրորդ Պետական թատրոնի շենքը. թատրոնի դահլիճն ունի 591 տեղ, բեմը վերակառուցված է, ստեղծված են բոլոր տեխնիկական անհրաժեշտ հարմարությունները, ֆոյեն գեղեցիկ դարդարված և նկարներով և բեմադրությունների մակետներով:

1934 թվին Յերկրորդ Պետական թատրոնը տունեցի դոյության հնգամյակը. այդ ժամանակաշրջանում թատրոնն ունեցել է խոշոր հաջողություններ ու նվաճումներ, վորոնցից պետք է նշել «Մեծապատիվ մուրացկանների», «Մեր և խարդավանանքի» և մի շարք այլ աչքի ընկնող բեմադրություններ:

Մանկավարժական ինստիտուտի շենքի յերկրորդ հարկում գտնվում է լուսրաժնի համերգային դահլիճը, 360 աթոռով, վորտեղ կազմակերպվում են հաճախակի համերգներ՝ տեղական և դրսից հրավիրված ուժերի մասնակցությամբ:

Պետթատրոնի շենքում տալիս է իր ներկայացումները և՛ Պատանի հանդիսատեսի թատրոնը, վորի բեմադրություններից առանձին հաջողություն ունեցան՝ «Գիքորը», «Հեռավոր ճամբորդը» և «Թոմաս յեղբոր տնակը»:

13 փողոցի և Կարսի խճուղու անկյունում 1932 թվին կառուցվեց Կարմիր բանակի տան հոյակապ շենքը, վորի թատրոնական դահլիճն ունի 660 տեղ:

Կարմիր բանակի տունը թե՛ դրսից և թե՛ ներսից ներկայացնում է իրենից քաղաքի ամենագեղեցիկ շենքերից մեկը: Բացի թատրոնական դահլիճից նա ունի գեղեցիկ կահավորված մի շարք դահլիճներ, կուլտուրական անկյուններ, մասնագիտական կարիներտներ, բուֆետ-ճաշարան, բիլյարդներ և այլն:

Դահլիճները, ֆոյենները և սենյակները գեղեցիկ դարդարված են գորգերով, բազմաթիվ նկարներով, դիադրամներով, լողունգներով ու գեկորներով:

Յերկաթուղու կայարանի մոտ կառուցված է ընկ. Գ. Սևոյանի անվան յերկաթուղային ակումբ-թատրոնը, կուլտուրական սպասարկման հարմարություններով: Գլխավոր դահլիճում դրված է 750 աթոռ:

Առանձին ակումբներ ունեն կառուցողները՝ 350 տեղով, քաղաքային կենտրոնական այգու մոտ և Կոստյաուսիլությունը՝ 400 տեղով՝ 16 փողոցի վրա:

Լուսաշխի տունը, 250 տեղ ունեցող իր դահլիճով, տեղավորված է 23—28 փողոցների անկյունում, կուլտուրականի տան յերկրորդ հարկում:

Կարմիր անկյուններ ունեն բոլոր պրոֆկազմակերպությունները:

Տեքստիլի կուլտ. հիմնարկները տեղավորված են

նրա բանավանում : Այստեղ ավարտվում է Տեքստիլի հոյակապ ակումբ-թատրոնի շենքի կառուցումը :

20—23 փողոցների անկյունում 1925 թվին քաղաքահանրապետը կառուցեց «Կինո-Հոկամբերի» շենքը, վորտեղ տեղավորվում է 584 հանդիսատես :

1859—73 թվին կառուցված նախկին Փրկիչ յեկեղեցին այժմ վերածված է զավառագիտական ընկերության թանգարանի, շենքը ներկայացնում է իրենից Անիի մայր տաճարի ընդորինակումը, ունի չափազանց նուրբ ու գեղեցիկ քանդակներ, արժեքավոր ճարտարագիտական հուշարձան է, վոր մի քանի անգամ նկարազրված է ուսսական և արտասահմանյան հնագետ ճարտարագետների կողմից :

Թանգարանն ունի պատկերասրահ, հնագիտական, արդյունաբերական, գյուղատնտեսական, զավառագիտական և հակահրոնական բաժիններ :

Բաց է ամեն ոք, բացի վեցորյակի առաջին ուրից և ունենում է որական հարյուրից ավելի հաճախումներ :

Քաղաքի կենտրոնական գրադարան-ընթերցարանը գտնվում է 23 փողոցի վրա . նա ունի 25·000 անուն գիրք : Բացի կենտրոնականից, հարուստ գրադարաններ ունեն բոլոր ակումբները և դպրոցները : Իրենց գրքերի քանակով ու վորակային արժեքով առաջնակարգ տեղ են գրավում կուսկարինետի և կարմիր բանակի տան գրադարանները :

Քաղաքում հրատարակվում են «Բանվոր», «Մանածագործ», «Յերկաթուղային» և «Ճակնդեղի Փրոնտում» թերթերը :

Ֆարական շրջանի 16 մահճակալի փոխարեն Լենինական քաղաքն ունի ներկայումս 385 հիվանդանոցային մահճակալ, իսկ մանկամսուրներում՝ 332 մահճակալ : Միայն մանկական հիվանդանոցն ունի 2 անգամ ավելի մահճակալ, քան նախկին Ալեքսանդրպոլը :

9-րդ փողոցի վրա տեղավորված կենտրոնական հիվանդանոցն ունի 127 մահճակալ և կազմված է ներքին, վիրաբուժական, ջղային, սուր վարակիչ բաժանմունքներից . ունի ռենտգենյան կարինետ, բակտերիոլոգիական լաբորատորիա և տիտազան կայան :

Հիվանդանոցն ապահովված է բժշկական վորակավոր կազրերով, սարքավորումով :

Քաղաքային բուժարանն ունի հետևյալ բաժանմունքները՝ ներքին, վիրաբուժական, աչքի, կոկորդի, կանանց, ատամնաբուժական, ատամնատեխնիկական, Ֆիզիո-տերապևտիկ, մանկական, մանկպուլյացիոն, ռենտգենյան :

23 փողոցի վրա տեղավորված են մանկաբարձական հիվանդանոցը՝ 53 մահճակալով, կանանց և մանկական կոնսուլտացիաները : Այստեղ է առողջապահության բաժնի աշխատակիցների 16 մահճակալանոց մասուրը :

11—28 փողոցների անկյունի շենքում գտնվում է մաշկա-վեներական դիսպանսերը՝ 20 մահճակալով, բուժարանով և լաբորատորիայով :

14 փողոցի վրա կառուցված է դիշերային սանատորիա՝ 25 մահճակալով, քաղաքի արդյունաբերական բանվորութան սպասարկման համար :

Տեքստիլ կոմբինատում կազմակերպված և պոլի-
կլինիկա՝ բոլոր մասնագիտական կաբինետներով և
4 ասոցիալագահական կայան՝ դործարաններին կից :
Տեքստիլի մասերն ունի 165 մահճակալ և աշխատում է
3 հերթի :

Նույն Տեքստիլում մանկամսուրին կից գտնվում
է հատուկ մանկական հիվանդանոց՝ 30 մահճակալով :

Հատուկ ասոցիալագահական կայաններ կազմա-
կերպված են մսի կոմբինատում և մեխանիկական
գործարանում :

Առանձին մսուրներ ունեն՝ կարի դործարանը՝
45 մահճակալով, մսի կոմբինատը՝ 16 մահճակալով
և այլ կետերում՝ չորս մսուր՝ 100 մահճակալով :

Կայարանի շրջանում, հատուկ կառուցված շեն-
քում տեղավորված են յերկաթուղային հիվանդանոցը՝
130 մահճակալով և բուժարանը :

Այստեղ տրվում է նաև ցեխարուժում թե՛ յերկա-
թուղայիններին և թե՛ քաղաքի բանվորությանը :

1932 թվից Տեքստիլի շրջանում սկսվեց հսկայա-
կան միասնական դիսպանսերի կառուցումը :

Հայրուժպետանն ունի յերկու դեղատուն :

ՊՐՈՒԵՏ. ՏՈՒՐԻԶՄԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

1932 թվից Լենինականում կազմակերպվեց պրո-
լետ. տուրիզմի և եքսկուրսիաների ընկերության քա-
ղաքային խորհուրդ, վորը ներկայումս ընդգրկում է
իր 65 արտադրական ըջիջներում 3500 անդամ :

Խորհուրդն ամեն տարի կազմակերպում է հեռա-
վոր, տեղական ու մանկական եքսկուրսիաներ, մա-
յովկաններ, ինչպես և դիտարչավներ :

1934 թվի ձմռանը, առաջին անգամ լինելով

Արագածի վրա բարձրացալ Լենինականի պրոլետ.
տուրիզմի դահուկավորների խումբը :

ՈՊՏԵ-ն տեղավորված է 23 փողոցի վրա, աշխա-
տանքի պալատի շենքում. 1935 թվից կազմակերպված
է բազա :

ՖԻԶԿՈՒԼՏ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Լայն ծավալ են ստացել Լենինականում Փիզկուլտ
աշխատանքները : Սեփական կահավորված Փիզկուլտ
դահլիճներ ունեն՝ Տեքստիլը, յերկաթգիճը, «Դինա-
մոն», Կարմիր բանակի տունը, կառուցողների ակում-
բը : № 3, 6 և 7 դպրոցներում կազմակերպված են
Փիզկուլտ սենյակներ :

«Դինամոն» ունի Կարսի խճուղու աջ կողմը ստա-
դիոն և լողարան :

Քաղաքի Փիզկուլտկազմակերպությունն ընդգր-
կում է 3160 Փիզկուլտուրնիկ, վորոնք մտնում են 57
խմբակի մեջ : Նա ունի հետևյալ սեկցիաները՝ դահու-
կային, մարմնամարզական, շախմատային, ծանրու-
թյան բարձրացման, բոքսի, ըմբշամարտի, շմուշկի,
սպորտ խաղերի (Փուտբոլ, բասկետբոլ և այլն) :

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԱՊ

Լենինականը գտնվում է ԽՍՀՄ-ից դեպի Պարս-
կաստան և Թյուրքիա տանող յերկաթուղագծերի
հանգույցում : Նա կապված է յերկաթուղագծով
Թիֆլիսի (220 կմ.), Յերևանի (154 կմ.), Արթիկի
(26 կմ.) և Թյուրքական սահմանի հետ : 1919 թվին
տեղի ունեցած ուժեղ պայթումն ավերեց Լենինակա-
նի կայարանը և մինչև խորհրդայնացումը վորչինչ չէր

արվել նրա վերակառուցման համար: Խորհրդայնացումից հետո կայարանը վերակառուցվեց, իսկ 1933 թվին նա լայնացվեց ու ավելի բարեկարգվեց:

Կայարանի շրջանում կառուցված են բազմաթիվ բնակարանային շենքեր՝ յերկաթուղային բանվորության համար, կայարանային շենքերը չընկալատված են պարտեզներով, բանվորութունն ապահովված է կուլտուրական և կամուռալ սպասարկումներով:

Այստեղ է գտնվում Լենինականի դեպոն, վորի բանվորութունն ակտիվ հեղափոխական գեր խաղաց 1905—1906, 1917 և 1920 թվերի շարժումների ժամանակ, իսկ խորհրդայնացումից հետո ցուցաբերեց աշխատանքային բարձր ենտուղիազմ սոցիալիստական շինարարության և պլանների կատարման ասպարեզում:

Լենինականը կապված է հանրապետական խճուղային ճանապարհներով Թիֆլիսի հետ 3 գծով՝ Կիրովականի, Ստեփանավանի ու Ախալքալակի վրայով և Յերեանի հետ 2 գծով՝ Սպիտակի և Դիլիջանի վրայով: Առանձին խճուղի անցնում է Լենինականից Ախուրիկի վրայով դեպի Թյուրքիա:

Տեղական խճուղային ճանապարհներով քաղաքը կապված է շրջանի բոլոր դյուղերի, Լենդեսի, Ամասիայի, Արթիկի և Ապարանի շրջանների հետ:

Քաղաքից դեպի հարավ-արևելք կառուցված է քաղաքացիական ողանալատորմի ակրողրոմը, վորը կապված է քաղաքի հետ խճուղիով: Ողային մշտական հաղորդակցութուն է կատարվում Թիֆլիսի և Յերեանի հետ:

Կապի կենտրոնական բաժանմունքը գտնվում է

քաղաքային այգու մոտ հատուկ այդ նպատակի համար կառուցված շենքում: Կապի առանձին բաժանմունքներ կազմակերպված են յերկաթուղում, Տեքստիլում, Պոլիգոնում և մսի կոմբինատում:

Հեռախոսային վանգային ցանցը ներկայումս ընդգրկում է միայն 309 բաժանորդ: քաղաքը կապված է միջքաղաքային հեռախոսով Թիֆլիսի, Յերեանի, Կիրովականի, Ամասիայի, Արթիկի և շրջանի 17 դյուղերի հետ:

Ընկ. Մռավյանի անվան տրանսիլացիոն ռադիոկայանը քաղաքում ունի 1020 բաժանորդ, տալիս է ամեն որ թե՛ տեղական հաղորդումներ և թե՛ տրանսիլացիա այլ քաղաքներից:

1933 թվին ընկ. Կիրովի անվան փողոցի վրա քաղաքային խորհուրդը կառուցեց հեռախոսային կայանի համար նոր շենք: Նոր հեռախոսացանցի մոնտաժն արդեն ավարտվում է և 1935 թվի առաջին կեսից սկսել է գործել հեռախոսային ԸԵ սիստեմը 1800 հեռախոսով:

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Հին Ալեքսանդրոպոլը մանր-առևտրականի—չարչու քաղաք էր: Ամբողջ թաղամասեր, մանավանդ քաղաքի կենտրոնում, բացառապես կազմված էյին մանր առևտրականների կրպակներից, վորոնց տերերը, իրենց խանութների առջևը նստած, ներս էյին հրավիրում անցորդներին, իրար ձեռքից խլում էյին «մուշտարիներին»:

23—25—27 փողոցները, ուր այժմ գտնվում են կենտրոնական հրապարակը, քաղխորհուրդը, կինոն,

գրավել էյին բազմաթիվ մանրավաճառ «աթտարնե-
րը», մտագործ «ղասարները», մրդավաճառ «բախալ-
ները», մանուֆակտուրիստ «բազադները», «աղ ծա-
խողները», բրդավաճառները և այլն, վորոնց միակ
արհեստը «եթան առնելն ու թանգ ծախելն» էր :

Խանութներում անարգել կերպով ոգտվում էյին
զանազան տիպի ու ձևի չափերով ու կշիռներով, վո-
րոնք փոխվում էյին, նախած նրան, կատարվում էր
զնում թե վաճառք :

Այսոր Լենինականը վողջ Խորհրդային Միության
հետ միասին վերջ է տվել մասնավոր առևտրին և սմ-
բողջ ապրանքաշրջանառությունը գտնվում է պետա-
կան առևտրի ու կոոպերացիայի ձեռքին, վորոնց կե-
տերն ընկած են քաղաքի բոլոր մասերում :

Պետական առևտրի հիմնական կազմակերպու-
թյունը Հայասն է, վորն ունի 12 առևտրական կետ,
ուր վաճառվում է մանուֆակտուրա, դարմատերեա,
պարաստի հագուստեղեն, կոշիկեղեն, ամանեղեն,
կահարասիք և այլն :

Կենտրոնական հրապարակի և 25 փողոցի անկյու-
նում տեղավորված է Հայասի մեծ պասաժը մի շարք
բաժանմունքներով, վորոնք ամբողջ ուրը լցված են
քաղաքի ու գյուղի բազմաթիվ աշխատավորներով :

Հայմատառի 4 կետերում վաճառվում են շինա-
բարական զանազան նյութեր և մետաղե իրեր : Իր
հարուստ աստորտիմենտով և խոշոր շրջանառությամբ
աչքի յե ընկնում Հայմատառի ելեքտրական խանու-
թը, կենտրոնական հրապարակի վրա, հյուրանոցի
շենքի առաջին հարկում :

Քաղաքի զանազան մասերում բացված են Պետ-

հրատի, Սայուզպեչատի, Սայուգորգուչյոտի և կո-
պերացիայի կետերը, վորտեղ վաճառվում է գրակա-
նություն, թերթեր և գրենական պիտույքներ :

Կենտրոնական դրախանութը գտնվում է 23 փողո-
ցի վրա. նույն փողոցի վրա, կլինոյի մոտ, գտնվում
է կուսհրատի խանութը, վորի յերկրորդ հարկում
տեղավորված է «Բանվոր»-ի խմբագրությունը :

Քաղկոպի, բայորսի, տեքստիլորսի, սննդառի,
Հայկոպի, «Արարատ» տրեստի, Զինկոպի և այլ
պետառևտրական ու կոոպերատիվ կազմակերպու-
թյունների առևտրական կետերը դասավորված են քա-
ղաքի զանազան մասերում :

Քաղաքում կան 3 բանկային հիմնարկներ (պետա-
կան, կոմունալ և գյուղատնտեսական), խնայողական
դրամարկղներ կան առանձին թաղամասերում, իսկ
կենտրոնական խնայողամարկղը տեղավորված է կո-
մունալ բանկի շենքում, 20 փողոցի վրա, հրապարա-
կի մոտ :

Այսոր Լենինականում չկան այլևս հին «աչի խա-
նեքը», սրճարան «զահվենները», «միկիտանները», վոր-
տեղ բազմաթիվ անգործ քաղաքացիներ դրողված էյին
թղթախաղով, նարդիով, դոմինոյով, ուր հարբեցո-
ղությունը չէր դադարում գիշեր ու ցերեկ :

Հին լենինականցին չէր սիրում քեֆ անել չորս
պատի մեջ : Ստանալով անհրաժեշտ «զարցադկա»
դահվախանում կամ միկիտանում նա ընկերներով
դուրս եր գալիս փողոց և վոտով կամ կառքերով
«դավուլ-գուռնայի» ուղեկցությամբ, սկսում էր շը-
ջադայել ամբողջ քաղաքը, վորպեսզի բոլորն ել իմա-
նան, վոր նա քեֆ է անում :

Այժմ Լենինականում հիմնովին վերացել են այդ կենցաղային այլանդակությունները:

Մենդառի և կոպերացիայի գծով քաղաքում գործող 45 ճաշարանում սնունդ և ստանում քաղաքի աշխատավորությունը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հնում քաղաքը չըջապատող վարելահողերն ու արոտները կազմում էին քաղաքային «ինքնավարության» սեփականությունը: Այդ հողամասերը քաղաքային վարչությունը տալիս էր կապալով առանձին քաղաքացիների, գլխավորապես հայ և թուրք հողագործ «ռանչպարներին» խմբերի ղեկավարներին, վորոնք իրենց հերթին բաժանում էին հողը տնտեսություններին շատ ավելի բարձր գներով:

Հայ և թուրք ռանչպարներն ապրում էին առանձնացած գուտ գյուղական կյանքով հյուսիսային արվարձան «գյուղացոց թաղում» և հարավային արվարձան «թուրքի թաղում»:

Ջրովի հողամասերն աճուրդով վերցնում էին քաղաքային վարչության հետ կապ ունեցող զանազան «աղաներ», վորոնք հանձնում էին հողերը կրկնակապալով հողագործներին ու բանջարաբույծ բոստանչիներին:

Գաշնակցության տիրապետության տարիներին թուրք աշխատավորությունն ամբողջովին հեռացավ քաղաքից, իսկ հայ ռանչպարները ղեռես մի քանի տարի շարունակեցին իրենց գուտ գյուղական կյանքը, մշակելով քաղաքային հողերը:

Լենինականի ու նրա չըջապատի հողերը, շնորհիվ

սեահողի և բարենպաստ կլիմայական պայմանների, շատ հարմար են գյուղատնտեսության համար. այստեղ վաղուց ի վեր մշակվում էին ցորեն, գարի, կարտոֆիլ, բանջարեղեններ:

1928 թվին, յերբ փորձադաշտում կատարված փորձերը ցույց տվին վար մեր պայմաններում շաքարի ճակնդեղը տալիս է բարձր բերքատվություն և բեկորային շաքարունակություն ու այդպիսով նպատակահարմար է շաքարի գործարանի կառուցումը, քաղխորհուրդը տրամադրեց քաղաքային բոլոր ջրովի վարելահողերը Սայուզսխարի շաքարի ճակնդեղի տնտեսությանը, վորը և մշակում է այժմ այդ հողերը:

Տեքստիլ կոմբինատից դեպի հյուսիս տնտեսությունը կառուցել է մի շարք գյուղատնտեսական շենքեր, ունի ուժեղ մեքենայացրած պարկ, վերջին սարիներին ստեղծել է մասնագիտական և բանվորական ուժեղ կազմեր:

Ինչ վերաբերում է Լենինականի ռանչպարներին ու բոստանչիներին, նրանք մեծ մասամբ աշխատում են խորհրդային և քաղաքամերձ տնտեսություններում, իսկ յերիտասարդությունն ընդգրկվել է արգյունաբերության մեջ:

«Գյուղացոց թաղում» վերացվում է հին կենցուղը և գյուղաքաղաքը փոխում է իր դեմքը:

Բանձնատակարարման դրությունը բարելավելու նպատակով Լենինականի հողերի վրա կազմակերպվեցին մի շարք քաղաքամերձ տնտեսություններ բայրսի, տեքստիլորսի, Ջինկոպի, կաուչուկչիսի և այլն, վորոնք տարեց տարի զարգանալով ու կարգավորվելով, ապահովում են աշխատավորությանը բանջարեղենով:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՅԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Լենինականը լինելով նոր քաղաք ինքը չունի պատմական մեծ հիշատակարաններ, հին Գյումրի բերդը քանդված է և տեղը կառուցված է նոր բերդ, վոր միայն 100 տարվա պատմություն ունի: Բացի այդ, գա-վառադիտական թանգարանի շենքը կառուցված է 70 տարի առաջ, բայց նա չի ճարտարապետություն հոյակապ շենք է ընդօրինակված Անիի մայր տաճարից:

Լենինականի ավագուսներում գտնված են մամոնտի վոսկորներ և քարե դարի վերջերից մնացած գեղեզմաններ ու գործիքներ:

Բայց յեթե Լենինական քաղաքն ինքն աղքատ է պատմական հիշատակարաններով, նրա շրջապատը ընդհակառակը շատ հարուստ է դրանցով:

Քաղաքից 8 կիլոմետր հեռավորությամբ, դեպի հյուսիս ընկած են Վերին և Ներքին Ղանլիջա գյուղերը:

Այստեղ, բարձր բլրի վրա, գտնվում է Վանի ուրարդական թագավոր Արգիշտի II-ի սեպագիր հինգատողյան արձանագրությունը հետևյալ բովանդակությամբ՝

Խալե աստվածային աստծուն

Արգիշտին ասում է

Յես տիրեցի Երախի յերկիրը

Յես հետ խլեցի Իրգանիունի քաղաքը

Իջկիգուրու յերկրից:

Ինկատի ունենալով, վոր Արգիշտի յերկրորդը թագավորել է 778-750 թվին քրիստոնեական երայից առաջ, պետք է յենթադրել, վոր քրիստոնեական երա-

յից ութը դար առաջ այստեղ յեղել է Իրգանիունի քաղաքը և Երախի յերկիրը:

Նույն Ղանլիջայում այսոր դեռ ևս կանգուն են պատմական ու ճարտարապետական արժեք ունեցող յերեք վանքեր, վորոնցից յերկուսը մնացել են լավ դրությունը, իբրև հետեվանք հետադայում կատարված ուստավրացիայի:

Այդ վանքերը, ինչպես յերևում է նրանց պատերի փորագրություններից, 986-1025 թվին կառուցել է Վահրամ Պահլավունին: Այստեղ գտնվելիս է յեղել Պահլավունիների կալվածք Մարմաշեն գյուղը:

Այդտեղ մնացել են նաև ավելի հին ժամանակներում կառուցված բերդի հետքեր:

Լենինականից 10 կլմ. վրա, դեպի արևելք ընկած է Իրրաջլար գյուղը. այստեղ գտնվում են մի հին յեկեղեցու ավերակներ, վորը քրիստոնեությունից առաջ յեղել է կապաչտական մեհյան:

Յեկեղեցու խորանում, շենքի հարավային կողմը, մնացել է կապաչտական հին գոհարանը և մի առու, վորով գոհերի արբունը դուրս է հոսելիս յեղել մեհյանից:

Քաղաքից հարավ-արևելք, 13 կլմ. վրա ընկած է Իլխիաբի գյուղը, վորի արևմտյան բլրի վրա գտնվում են նախապատմական հնագույն կիկլոպյան պարիսպների մնացորդները:

Լենինականից դեպի հարավ, 18 կլմ. վրա, գտնվում է Հոռոմ գյուղը. այդ գյուղի մոտ, թոճարդաչ տանող ճանապարհի վրա, գտնված են բազմաթիվ

ավերակներ և հին բերդի մնացորդներ, կիկլոպյան պարիսպներով:

Այստեղ կան մի շարք դուրմեններ ու կրոմբիներ (նախապատմական գերեզմաններ): Ղարանդու գետուհի ձախ ափին, Հոռոմի ու Թոմարդաչի սահմանագլխի բլրի ժայռի վրա փորագրված են «այծագիր» նշանագրեր, վորոնք գեոևս կարդացված չեն:

Հին պատմական կառուցումներ ունի Արթիկ գյուղը, վորը գտնվում է քաղաքից 26 կմ. վրա և կապված է նրա հետ յերկաթուղագծով:

Գյուղի կենտրոնում կառուցված վանքը պահպանում է VIII դարին:


Արթիկից դեպի արևմուտք մնացել է կիսավեր Լժբաթա վանքը, վորն ունեցել է բազմաթիվ միաբանություն և վորին, ըստ պատմական տվյալների, պատկանելիս են յեղել մի շարք գյուղեր:

Արթիկից 4 կմ. հեռավորության վրա գտնվում է Հառիճի վանքը (Ղփչաղ), վորտեղ մնացել են մի շարք կառուցվածքներ V, VII և XII դարերից: Ուրարտական մի այլ սեպագիր արձանագրություն գրանված է Ղուլիջանում Հառիճից մոչ հեռու:

**ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՄԱՐՇՐՈՒՏ ԼԵՆԻՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔՈՒՄ 3 ՈՐՎԱ ՀԱՄԱՐ**

Ա. ՈՐ

Տուրիստը ժամանելով Լենինականի կայարան, ախտորոտով մեկնում է Մայիսյան հրապարակ վորտեղ գտնվում է հյուրանոցը, ինչպես նաև Պրոլետարուրեղմի (ՊՏԵԸ—ՈՊՏԵ) խորհրդի գրասենյակը:



9. Սեդանի անվան յերկաթուղային ակուվիդ

ավերակներ և հին բերդի մնացորդներ, կիկլոպյան պարիսպներով:

Այստեղ կան մի շարք գոյմեններ ու կրամբեխներ (նախապատմական զերեղմաններ): Ղարանդու գետակի ձախ ափին, Հոռոմի ու Թոմարդաչի սահմանագլխի բլրի ժայռի վրա փորագրված են «այծաղիր» նշանագրեր, փորոնք գեոևս կարդացված չեն:

Հին պատմական կառուցումներ ունի Արթիկ գյուղը, փորը գտնվում է քաղաքից 26 կլմ. վրա և կապված է նրա հետ յերկաթուղաղծով:

Գյուղի կենտրոնում կառուցված վանքը պատկանում է VIII դարին:

Արթիկից դեպի արևմուտք մնացել է կիսավեր Լժբաթա վանքը, փորն ունեցել է բաղձաթիվ միաբանություն և փորին, ըստ պատմական տվյալների, պատկանելիս են յեղել մի շարք գյուղեր:


Արթիկից 4 կլմ. հեռավորության վրա գտնվում է Հառիճի վանքը (Ղփչաղ), փորտեղ մնացել են մի շարք կառուցվածքներ V, VII և XII դարերից: Ուրարտական մի այլ սեպագիր արձանագրություն գրանված է Ղուլիջանում Հառիճից փոչ հեռու:

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՄԱՐՇՐՈՒՏ ԼԵՆԻՆԱԿԱՆ

ՔԱՂԱՔՈՒՄ 3 ՈՐՎԱ ՀԱՄԱՐ

Ա ՈՐ

Տուրիստը ժամանելով Լենինականի կայարան, ավաստբուսով մեկնում է Մայիսյան հրապարակ փորտեղ գտնվում է հյուրանոցը, ինչպես նաև Պրոլետտուրիզմի (ՊՏԵԸ—ՈՊՏԵ) խորհրդի գրասենյակը:



Գ. Սեպանի անվան յերկաթուղային տնակ

Վերջինս տեղավորված է Աշխատանքի պալատում 23 փողոցի վրա :

Հանգստանալուց հետո վրաքով 20-րդ փողոցով կոմունալ բանկի և մանկավարժական ինստիտուտի առջևով գնալ քաղաքային այգին (ուր տեղավորված է նաև 2-րդ Պետական թատրոնը), բարձրանալ ալյուբրակը և դիտել Լենինականի գլխավոր կառուցվածքներն ու արվարձանները (Բերդ, Սևերսկի, Պոլիգոն, Արփաչայի ափերը, Մեխանիքական, տոմեոի և այլ գործարանները և այլն) :

Իլրակից Կարսի խճուղով Փիղկուլտ ստադիոնի և Մեխանիքական գործարանի առջևով գնալ կուլտուրայի և հանգստի պարկը (Չերքեղի ձոր) . դիտել Արարատ արեստի սպիրտի գործարանը :

Ժամանակը ներելու դեպքում այնտեղից անցնել Պոլիգոն և վերադառնալ կաթնարդյունաբերական տեխնիկումի առջևով, իջնել գյուղացոց թաղ (հին Գյումրի) և Գյումրի գետակի ափերով, իսկ հետո 23 փողոցով վերադառնալ Մալխոյան հրապարակ :

Յերեկոյան այցելել Կարմիր Բանակի տունը :

Բ. ՈՐ

Առավոտյան պտույտ Մալխոյան հրապարակի շուրջ՝ Քաղխորհրդի շենքը, 25 փողոցով անցնել կուլտուրական, 28 փողոցով իջնել 23 փողոց, դիտել գավառապետական թանգարանը (նախկին «Փրկիչ» յեկեղեցին) և նրա շենքի ճարտարապետությունը :

Ավտոբուսով Տեքստիլի բանվորական ավանը : Կարգով այցելել մանարան, գործվածքային, արիկոտած և նոր կառուցվող գործարանները : Պտույտ բանավա-

նում, ուշադրութուն դարձնել շենքերի ճարտարապետական վոճին, բանավանի ձևավորման : Այց կուլտ հիմնարկները (տեքստիլի ակումբ և այլն) :

Ավտոբուսով Ինտերնացիոնալ փողոցով յերկաթուղու կայարան : Այլ յերկաթուղային հիմնարկներն ու ձեռնարկները (դեպոն և այլն) :

Դիտել Մալխոյան ապստամբության հուշարձանը : Լենինականի և մանավանդ դեպոյի դերը Մալխոյան ապստամբության ժամանակ :

Գ. ՈՐ

Յերեկոյան Սևոյանի անվան ակումբը :

Մալխոյան հրապարակից ավտոբուսով մտի կոմբինատ . դիտել կոմբինատի արտադրական ցեխերն ու բանավանը :

Վերադառնալ Կապաչի պոստով :

Ավտոյով կամ կառքով Պոլիգոնի միջով և Շիր-Ջրանցքի վրայով Լենգես : Դիտել Շիր-Ջրանցքը, Շիր-Ջրանցքի ակվեդուկը, Կապսի ձորը, հիդրոկայանն ու ջրվեժը :

Վերադարձ Ներքին Դանլիճա գյուղով : Դիտել Մարմաշենի միջնադարյան ճարտարապետությունը, իսկ հարավից ժայռի վրա Արդիչտի Բ-ի սեպագիր արձանագրությունը :

Դանլիճայում բացի Մարմաշենից կան ավելի հին դարերի կառուցվածքների հետքեր :

Արփաչայի տեսարանները :

Յերեկոյան այցելել Պետական թատրոն կամ կինո «Հոկտեմբեր»-ը :



ՀՀ Ազգային գրադարան



NL0301672

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

8992



Կ. ԱՄԲԱՐՇՄՅԱՆ
Լ Ե Ն Ի Ն Ա Կ Ա Ն
Գիւ Հ Տ Ր Արմենի, Ջրիւան, 1936 ը.